



ԵՐԿԱՆԴ ՇԱՀԱԶԻՉ

ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆ, ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ, ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ*)



րժանի է ուշադրության նաև Եզյանի մասին Տիգրանյանի պատմած մի ուրիշ դեպք։ 1887 թվի նոյեմբերի սկզբին, երբ Տիգրանյանի աքսորից Երևան վերադառնալու ժամկետը լրանալու վրա էր և նա արտասահմանից վերադարձել էր Պետերբուրգ։ Նրա և Եզյանի միջև այնպիսի մոտ հարաբերություն է ստեղծվում, որ վերջինս հայտնում է նրան, թե մտադիր է իրեն կտակաւոր կարգելու և հանձնում է նրան իր նամակները կարգի բերելու և ցուցակագրելու գործը։ Տիգրանյանը նամակները կարգաւորում է, որ դրանք իրենց մեջ այնքան առատ տեղեկություններ են պարունակում կոմկասաբնակ հայերի մասին, որ կարելի է ասել, թե հայաբնակ վայրերի որ անկյունում էլ փոշուացել են, Եզյանի բնակարանում լսվել է։ Տեղի ունեցած դեպքերի և իրադարձությունների հետ միասին նամակներում նկարագրված են եղել նաև մասնավոր մարդկանց ընտանեկան կյանքը, հարաբերությունները և մինչև իսկ ամենաշնչին դեպքերի մանրամասնությունները։

Տիգրանյանի համար պարզվել է նաև, որ բոլոր հայաբնակ վայրերը բաժանված են եղել երեք անձանց մեջ—Գևորգյան ճամարանի տեսուչ Կարապետ Կոստանյանի, Նահապետ վարդապետի և Գևորգ Եմանգուլյանի. առաջին երկուսն Երևանյան շրջանի, իսկ երրորդը Վրաստանի և ընդհանրապես բովանդակ Կոմկասի համար Դրանք Եզյանի գլխավոր գործակալներն են եղել և երկրի զանազան վայրերում ունեցել են իրենց մարդիկը, որոնց միջոցով տեղեկություններ են հավաքել ու հաղորդել Եզյանին։ Տիգրանյանի ասելով

Եզյանին անհրաժեշտ է եղել իր նպատակների համար իմանալ, տվ ո՞րքան փող է ունեցել և գլխավորապես ո՞վ է Կոմկասում իրեն համակրողը և հակառակորդը և ո՞վ կարող էր նամակներով ազդել, ներգործել Սանասարյանի վրա, մի խոսքով Տիգրանյանի ենթադրությամբ, դա եղել է մի ճկազմակերպված ճիգլիտական շկոյա։

Եզյանի ամենամեծ գործը սակայն եղել է Կարնո Սանասարյան միջնակարգ դպրոցի հիմնադրումը։ Նա ինքն, իհարկե, ունեւոր մարդ չէր, որ կարողանար այդպիսի մի թանկարժեք հաստատություն հիմնել։ Դպրոցի հիմնադիրը և պահողը եղել է Մկրտիչ Սանասարյանը, բայց Եզյանի խորհրդով և իրական աջակցությամբ է կատարվել ամենը. նրա ձեռքով է 1886 թվին գրվել ու վերջնականապես հաստատվել կտակը, որով ապահովված է եղել դպրոցի գոյությունը նաև կտակակատարի մահվանից հետո։

Եզյանը վախճանվել է 1913 թվին, և որքան մենք հիշում ենք, յուր ժառանգներին մի առանձին կարողություն չի թողել. գոնե այս մասին տշինչ չի գրվել, ոչինչ չի հայտնրվել։

Նրա գրվածքներից առանձնապես ուշադրության արժանի է Վեհահայոց բռնի միությունը։

Բ

Այժմ ծանոթանանք Մկրտիչ Սանասարյանին, որը մեր մոտ անցյալում բարեգործ անձի մեծ համբավ էր վաստակել։

Մկրտիչ Սարգսի Սանասարյանը ծնվել է Թիֆլիսում 1818 թվին, ապրիլի 10-ին։ Նրա հայրը՝ Սարգիս Սանասարյանը վանեցի էր։ Նա ամուսնանալով վանեցի հայտնի Դևորդ աղա Արծրունու դստեր՝ Մարիամի հետ, 1814 թվին ընտանիքով վանից տեղափոխվում է Թիֆլիս, իր անոր՝ Դևորդ Արծրունու

*) Տես սկիզբը «Էջմիմսիւն» Օգոստոս—սեպտեմբեր—հոկտեմբեր, 1946 թ.։

այնտեղ փոխադրվելուց երկու տարի հետո: Մկրտիչը սովորել է «Ներսիսյան ազգային հոգևոր դպրոց»-ում և մտադիր է հղել իր դասընկեր Ռոստոմյանի հետ (հետագայում Բագվի Մարդասիրական ընկերության հիմնադիր բժ. Ռոստոմյանը) մեկնել Վենետիկ՝ ուսումը շարունակելու համար: Սակայն հենց այդ ժամանակները նրա հայրը վախճանվում է և նա ստիպված է լինում հրաժարվել յուր մտադրությունից ու մնալ Թիֆլիսում:

1835 թվին նա մտնում է գինավորական ծառայության Մինգրելյան եգերների գունդը՝ յունկերի կոչումով և մասնակցելով լեռնականների դեմ մղված շատ կռիվների, երկու անգամ ծանր վիրավորվում է, որի հետևանքով էլ ստիպված է լինում թողնելու ծառայությունը և նվաճագրի աստիճանով ու լիակատար կենսաթոշակով: Նա գտնվել է «վիրավորների կոմիտեի» առանձին խնամքի տակ և պարգևատրվել է Ս. Դեդոբի շքանշանով՝ 1842 թվի հուլիսի 27-ին Շամիլի դեմ տեղի ունեցած կռիվում ցուցաբերած անվախության, անվնասության և քաջության համար:

Սանասարյանի պապ Գևորգ աղա Արծրունին վախճանվել է առանց կտակ թողնելու և նրա ահագին կարողությունը ժառանգություն է մնացել միակ որդի գեներալ Երեմիա Արծրունուն:

Մկրտիչ Սանասարյանը իր եղբոր՝ Կարապետի հետ, որ նույնպես եգերյան գնդի սպա էր, 1844 թվին դիմում են Թիֆլիսի գավառական դատարանը՝ խնդրելով, որ իրենց ևս բաժին հատկացվի պապի թողած ժառանգությունից, ըստ ռուսական օրենսգրքի, 1/14 մասի չափով, որ կազմում է 48,236 ռ. մի քումար և պետք է հասներ իրենց մոր, Երեմիայի քրոջ, Մարիամին:

Դործի լուծումն ձգձգվել է դատարանում ու գործը հասել է մինչև «պետական խորհուրդ», որը 1851 թվի դեկտեմբերի 12-ին կայացրած և թափավորի կողմից՝ հաստատված որոշմամբ ամբողջ գործը ետ է ուղարկել Թիֆլիս՝ պատճառաբանելով, որ այդպիսի գործերը պետք է քննարկվեն Վրաստանում այդ ժամանակ գործող Վախթանգ թագավորի օրենսդրության համաձայն: Եվ քանի որ ըստ այս օրենսդրության անկասկած թողնված կարողությունը արական ժառանգ լինելու դեպքում չէր հասնում իրական սեռի ժառանգներին, Սանասարյանների խնդրը մերժվում է:

Այս դատական գործը ոչ միայն թանգ է նստել երկու կողմերի համար էլ, այլ և երկու, մոտ ազգական, ընտանիքների իրար հետ թշնամանալու և իրարից իսպառ կտր-

վելու ու հեռանալու պատճառ է հանդիսացել: Մկրտիչ Սանասարյանի վրանքում, մանավանդ որ Կարապետն արդեն վախճանվել էր, այս դատական գործը խոշոր դեր է խաղացել: Գործը Պետերբուրգ տեղափոխելուց ինքն էլ է փոխադրվում այնտեղ, ուր շուտով կարողանում է իր համար մեծ ու պատվավոր դիրք ստեղծել մայրաքաղաքի դրամատիկական աշխարհում:

Պետերբուրգ փոխադրվելուց նա ունեցել է 15 հազար ռուբլի մի գումար, որը հաջող առևտրական գործարքների միջոցով կարողացել է շահեցնել ու խոշոր գումարի հասցնելով ընտրվել «Կավակա և Մերկուրի» նավային ընկերության գործոն ղեկավար: Այդ պաշտոնում երկար մնալու հետևանքով 1889 թվին կատարվել է նրա 25-ամյա ծառայության հոբելյանը և այդ առիթով էլ ընկերության մեծ շոգենավերից մեկը կոչվել է նրա անունով: Դա սովորական, պաշտոնական մի տոնակատարություն չի հանդիսացել, այլ ուրախ, սրտանց, ամենին հաճելի տոնախմբություն, որովհետև ամենքը սիրել ու հարգել են նրան, իբրև ընկերության գլուխ կանգնած, գործը սիրող, օգտակար ու հմուտ ղեկավարի, իբրև բարի, ամեն մի լավ բանի, ամեն մի աշխատակցի կարիքին ընդունաբողի, համակրելի ու ազնիվ բարեկամի: Ամեն մի դրամական առաջնապի ժամանակ, երբ արժեթղթերի լուծումը տատանում էր նկատվում և ընկերությունը դրամի սղություն էր զբաղում, Սանասարյանն իսկույն օգնության էր հասնում, իր սեփական ունեցածից խոշոր գումարներ մուծելով ընկերության դրամարկղը, որպեսզի ընկերության գործերի մեջ կայացարարակցություն ու կայունություն պահպանվի: Սա տեղին մատուցված մի խոշոր ծառայություն էր, որ հազվագյուտ երեվույթ լինելով թանգ է գնահատվել ամենքից: Ահա այդ բոլորի համար էր, որ հոբելյանական հանդեսում ծովակալ Ժանդրը և հայտնի Ուստինը հոբելյանին ուղղած իրենց ողջունի ճառերում առանձնապես նշեցին նրա անձնավորությունը ընկերության շահերին և ցուցաբերած արտանց ու միատեսակ վերաբերմունքը բոլոր աշխատակիցների հանդեպ:

Դրանից մի տարի առաջ էլ Պետերբուրգի հայ համայնքն էր տոնել Սանասարյանի ծննդյան յոթնասուներեքյակը՝ նրան նվիրելով մի թանկարժեք բյուզանդ (ծծողական թղթապանակ), որի նկարը պատրաստել էր աշխարհահռչակ ծովանկարիչ Ի. Կ. Ալվազովսկին: Հայ հասարակությունը սիրել ու հարգել է նրան, իբրև հայության շահերին նվիրված անկաշառ ու գիտակից բարեգործի: Նրա սիրելի ու մոտ բարեկամներն են եղել Պետրոս Մանջյանը, Միքայիլ Միսն-

սարկանք, Մովսես Բուզադյանը և Կարապետ Նզլյանը:

Սանասարյանն ի բնի առողջ մարդ է եղել, բայց նրա առողջությունը կոխվեցրեւում շատացած ծանր վերքերի և Պետերբուրգի նրա համար անսովոր խոնավ, միգրացատ, սակավարե ու ճահճային կլիմայի շնորհիվ սկսել է վաղ քայքայվել: Նա ունեցել է թոքերի քրոնիկական բորբոքում, որ երբեմն սաստկացել, երբեմն էլ մեղմացել է և նա ը վիճակի է եղել ապրելու: Դրանք 1890 թվի դարձան, այսինքն 72 տարի, շնորհիվ իր վարած կյանքի համեմատ ու զգուշ ուժեղացում: 1890 թվին նրա հիվանդությունը սաստկանում է ու նա բրժիշկների խորհրդով մեկնում է Նիցցա: ձմեռն այստեղ անցկացնելով գարնանը նա ուղևորվում է Փարիզ, ուր և վախճանվում է: Նրա վերջին նամակը յուր քրոջը՝ Կատարինեին Պետերբուրգից եղել է 1889 թ. դեկտեմբ. 19-ին, իսկ Փարիզից 1890 թ. մայիսի 19-ին:

Հանգուցյալի չեղած ցանկությունն է եղել թողնել իրեն թիֆլիսի վանքի եկեղեցու բակում, և նրա այդ ցանկությունը կատարել է նրա քրոջ արդի և լեռն Տիգրանյանը: Նա բնու դիակը փոխադրել է տվել Մարտիկի վրայով Պոլիս ու այնտեղից էլ Բաթումի վրայով Թիֆլիս: Փարիզի և Պոլսի հայերը նրա դադարի վրա շքեղ ծաղկեպսակներ են դրել, իսկ խորեն եպիսկոպոս Նարայեյ (Գալֆայան) դադարն ուղեկցել է Պոլսից մինչև Թիֆլիս: Կազմակերպված է եղել շքեղ հուղարկավորություն և քրոջ, մյուս հարազատների ու խոռո բազմության ներկայությամբ մարմինն ամփոփվել է վանքի բակի ձախ փողովում, որտեղ նրա գերեզմանի վրա Տիգրանյանի հողացողությամբ իր ժամանակին մարմարյա մի մատուռաձև շինություն է կառուցվել, ու ներսը դրվել նրա մահաբձանը:

Թե ի՞նչ վիճակի մեջ է թողած եղել Սանասարյանը յուր գործերը և ի՞նչ կտակ է արած եղել իր կարողության մասին, պատ-

մում է մեկ Տիգրանյանն իր «Իմ հիշատակարանը»-ում: «Քաղումից հետո, — գրում է նա, — ես զնացի Պետերբուրգ, բիճուս կտակի համաձայն ժողովությունս առանալու: Երբ եկա Պետերբուրգ, Նզլյանը ցույց տվեց կտակը, ուր ինձ համար նշանակված էր հարյուր հազար մանեթ և տան վայրը: Նրա կայքի և Կարնո ուսումնարանի կառավարատար նշանակված էին — Նզլյանը, Նվանգուզյանը և ես:

Երիճուս փողերը բանկերից ժողովուրդից հետո, հաշտվեց, որ նրա կայքն է 400,000 մանեթ հազար փող, որոնցից 100 հազար մանեթն իմն էր, ուրեմն ուսումնարանի համար մնում էր 300 հազար, իսկ նոմինալի գնով ավելի պակաս: Բիճեն իր բոլոր գործերը և փողերը հանձնել էր Նզլյանին, որին անսահման հավատում էր: Պետերբուրգի վաճառականական աշխարհում բիճեն հայտնի էր, որպես շատ հարուստ մարդ և ամենքն էլ զարմացան, երբ հաշտվեց, որ դեռեցել է չնչին կարողություն:

Սանասարյանը մի րարի բնավորությամբ և շատ համեստ ու չափավոր կյանք վարող մարդ է եղել: Նա Պետերբուրգում ապրելիս է եղել Նեակի պրոսպեկտի վրա Անիշկինի պալատի



Մ. Սանասարյան

դեմ, հրեա առամնաբույժ Վուլֆսոնի բնակարանում և իր տրամադրությամբ տակ ունեցել է առանձին նախասենյակով երկու սենյակ, վայելուչ սարք ու կարգով և համեստ կահավորությամբ: Նա ճոխություն չտիրեղով հանդերձ, սիրահար է եղել բնտիր պատկերների, սրտնցից մի քանի հատ զարդարել են նրա սենյակների պատերը և գեղարվեստական ընտիր իրերի, որոնցից մի քանիսը մահից հետո գտնվել են նրա մյուս իրերի մեջ ու անցել Տիգրանյանի ձեռքը: Մի ոտս հասակավոր հավատարիմ կին, Ազրաֆենա անուշով, որպես աղախին երկար ժամանակ ծառայել է նրա մոտ ու տնտեսաբար հոգացել նրա բոլոր համեստ պիտույքները: Նրա բնակարանի դռները միշտ բաց են եղել հայ և վրացի ուսանողների առաջ ու ոչ մի

կարողացաւ դատարկածն չի վերադարձել նրա մոտից:

Բարեգործութեանը, շունեւորների կարիքները հոգալը բխել է նրա էութունից, և ոչ թե ցուցամոլութունից, կամ մի տրեւէ այլ պատճառից: Դեռ 1858 թվին, երբ Մոսկվայում վախճանվում է Խ. Աբովյանի սիրելի աշակերտ, Մ. Նալբանդյանի ու Ս. Շահազիզի մտերիմ ընկեր և Ս. Նազարյանցի բարեկամ, նորավարտ բժիշկ երևանցի Գևորգ Գեղամյանը և հանդանակութուն են կատարում նրա հուղարկավորութունն ու թաղումը կազմակերպելու համար, Սանասարյանը, որ այդ ժամանակ Մոսկվայում էր գտնվում, արգելում ու իր վրա է վերցնում բոլոր ծախքերը, հանգստարանում էլ հոգեհացի սեղան պատրաստել տալով:

Վաթսուական թվականների վերջին նա իր բարեգործությունը կենտրոնացնում ու տարածում է հատկապես ժողովրդական լուսավորության գործի վրա և քանի որ լուսավորության գործը կախված էր ուսուցչական լավ կադրերի առկայությունից, դրա համար էլ նա բարձրագույն դպրոցների շրջանավարտներից ընդունակներին ընտրելով ու թողակ նշանակելով ուղարկում էր արտասահման կատարելագործվելու, նրանցից մի քան միայն պահանջելով, որ պարտավորություն ստանձնեն ավարտելուց ու վերադառնալուց ծառայել հայ դպրոցին: Բարեկարգ դպրոցը նրա հոգացողության գլխավոր առարկան է եղել: Չի եղել քիչ թիվ շատ կենտրոնական տեղում որևէ մի հայկական դպրոց, էջմիածնի ճեմարանից ըսկսած, որի բարեկարգության գործին Սանասարյանը մասնակցած չլինի: Դպրոցներից մի քանիսին նվիրել է Ֆիզիկական կաթինետներ, մի քանիսին աշխարհագրական բարտեզների համալրածու և պատմական աղյուսներ, մյուսներում կազմակերպել է տվել մատենադարաններ և այլն:

Թուրքահայության թշվառ կացությունը լուսավորության ասպարեզում, Կ. հարկե, նույնպես գրավել է նրա ուշադրությունը: Իր հայրենի վան քաղաքում, ի հիշատակ չոր մոր Մարիամի, նա բաց է արել Մարիամյան իգական դպրոցը ու մի գլուղական դպրոց էլ վանի վիլայեթի հայտնի Խարակոնիս գյուղում:

Հայ գրականության նպաստելն էլ նրա հոգացողության առարկան է եղել: Նրա ծախքով շատ գրքեր են տպագրվել: Էջմիածնի տպարանի մի խոշոր մասը նրա ծախքովն է ձեռք բերվել: Շատ հայ ուսանողներ ու գրականագետներ, գրողներ ու հրատարակիչներ դրամական օժանդակություն են ատացել նրանից, ինչպես օրինակ Ռ. Պանտկանյանը

ուսանողության շարքաջ օրերին Պետերբուրգում յուր հրատարակած Գամառ-Քաթիպայի տետրակների ու մյուս հրատարակությունների համար, ինչպես «Մեղու Հայաստանի»-ի խմբագիր Պետրոս Սիմոնյանը, որի 25-ամյա հոբելյանի առթիվ տարեկան 600 ռուբլի թողակ նշանակեց ու հաստատուն ֆոնդով ապահովեց դրա կանոնավոր և շարունակ ստացումը: Նա սովորություն ունեցր ամեն տարի այն հայ լրագրերին, որոնց ուղղութեանը հավանում էր, տասնյակ օրինակներով բաժանորդագրվել և պատվիրել այդ օրինակները նվեր ուղարկելու գյուղական չքավոր դպրոցներին և այլն:

Բայց նրա օգտավետ գործերի թագն ու պսակը կազմում է Կարնո Սանասարյան դպրոցի հիմնադրումը, որի հարատև գոյությունն ապահովելու համար հետագայում նա կտակել էր յուր ողջ կարողությունը:

Սակայն Կարնո պես հայաբնակ կենտրոնական վայրում մեծ հայկական դպրոց բաց անելու խնդիրը կապված էր մի շարք դժվարությունների հետ. անհրաժեշտ էր նախ ըստանալ Թյուրքիայի կառավարության համաձայնությունը, մեծել կառուցման հետ կապված մի շարք տեխնիկական խնդիրներ և կազմակերպել նոր բացվելիք դպրոցի ղեկավարման գործը: Ահա այս բոլորի համար էլ Սանասարյանին հարկավոր էր Եզյանը՝ նրա գիտությունը, հմտությունը, աջակցությունն ու խորհրդերը: Ամենադժվարին խնդիրն այն էր, որ թուրքական կառավարությունը հրաժարվել էր արտոնել դպրոցի բացումը, վախճանալով որ բացվելիք դպրոցը կարող է մոտ ապագայում վերածվել հայրի համար քաղաքական պրոպագանդայի վայրի, դառնալ հեղափոխության բույն ու կենտրոն. դրա համար անհրաժեշտ էր տրամադրել ուսու բարձր կառավարությանը, որպեսզի վերջինս իր Պոլսի դեսպանի միջոցով ազդեր թուրքական կառավարության վրա և կասկածները փարատելով ուղի հարթեց բացման արտոնությունը ստանալու համար:

Արդ ո՞վ կարող էր այդ անել, եթե ոչ Եզյանն ու նրա պես մարդիկ, որոնք գիտեին կառավարական բարձր հաստատությունների բոլոր ելք ու մոտեցրել, և որոնց առաջ, շնորհիվ իրենց լուսեցած վապերի, բաց էին բոլոր փակ դռները:

Այսպիսով հաջողվում է ուսաց կառավարության հրահանգի շնորհիվ փարատել կասկածները և ստանալ բացման արտոնությունը, որից հետո վառուցվում է դպրոցի շենքը և լրիվ կահավորվում ուսումնական անհրաժեշտ բոլոր պիտույքներով: Միաժամանակ ուսուցչական կադրեր էին պատ-

խառնվում նոր բացվելիք դպրոցի համար. դրանց թվում հայտնի մանկավարժ Սեդրակ Մանդինյանը, Փիլիպոս Վարդանյանը, Հովսեփ Մաղաթյանը և Աբրահամյանը. սրանցից առաջին երկուսը մնում են Ռուսաստանում՝ հայկական դպրոցներում աշխատելու համար, իսկ վերջին երկուսը անմիջապես մեկնում են Կարին և մի երրորդի հետ միասին ղեկավար հանդիսանում նորաբաց «Սանասարյան դպրոց»-ի՝ մինչև նրա կարճատև, բայց շատ փառավոր կյանքի վերջը:

Այդ դպրոցը, ինչպես վկայում են օտար ճանապարհորդները, մի «ծաղկալ օվաղին» է եղել սուլթանական Անատոլիայի, կամ լավ է ասել Հայկական նահանգների «անապատի» մեջ: Վանի ռուսական նստիկին հյուպատոս Կոլոբակինի ասելով, դա, «բերե մի լիակատար դպրոցական հիմնարկություն, լուրջ հարված է հասցրել բողոքականների քաղաքական Բյուրքական Հայաստանում, որովհետև նրանց դպրոցները չեն կարողացել մրցել դրա հետ»: Ճանապարհորդների ասելով այդտեղ աճեն ինչ պոհացուցիչ ու թարմացուցիչ տալավորություն է թողել, և՛ նկարչության սրահները, և՛ երաժշտության դահլիճը յուր բազմաթիվ դաշնամուրներով ու լարային գործիքներով, և՛ ուսումնական պիտույքների բազմապիսի հավաքածուները, և՛ լուսավոր ու ընդարձակ դաստարանները, և՛ ուսուցիչների ու ուսանողների թարմ, առույգ կերպարանքը:

Լեոն Տիգրանյանի 1890 թվի օգոստոսի 30-ին Պետերբուրգից՝ դրած և նույն թվի նոյեմբերի 8-ին «Մշակ»-ի 102 համարում տպագրված մի նամակից իմանում ենք, որ դպրոցի համար Սանասարյանը թողած է եղել իսկական ղեկով հաշված 268,428 ռուբլու տոկոսաբեր արժեթղթեր, որոնք բոլորսի գներով այն ժամանակ կազմում էին մոտավորապես 345 հազար ռուբլի և Կարինում էլ մի հոդամաս, որի մասին կտակալատարներից մեկը (Նվյանը) ոչ մի տեղեկություն չի տվել, թեև դրանից 8-10 տարի առաջ նրա խորհրդով ու աջակցությամբ է գնված եղել: Բացի այդ Սանասարյանը թողել է 202,394 ռուբլու ոչ ժամկետանց և 52,391 ռուբլու ժամկետանց պարտավորահաներ:

Սանասարյանի երեք կտակալատարներից Գևորգ Նվանդալյանը մի շարքավ Պետերբուրգում մնալուց հետո Նվյանին մի հավատարմաթուղթ է տալիս, որով լիազորում է նրան իր փոխարեն զբնի պետական դատաւունքը ուսումնարանապետական բոլոր թղթերը, ատանալ դրանց տոկոսները, հետ վերցնել թղթերը, առնել, ծախել այդ թղթերն ըստ ցանկության: Եվ Նվյանը բոլոր ար-

ժեթղթերը ղնում է դրամատունը իրեն վերապահելով վերահիշյալ լիազորությունը: Սակայն դա հակառակ էր կտակի իմաստին, քանի որ ուսումնարանապետական գումարների նկատմամբ վարդապետությունը վերապահված է եղել Լեոն Կտակալատարներին: Տիգրանյանը քանիցս բողոքել է այդ ապօրինություն դեմ, բայց ապարդյուն. Նվյանը նրանից էլ պահանջել է տալ իրեն նույնպիսի լիազորություն, ինչ որ տվել է Նվանդալյանը:

Ի վերջո Սանասարյանի արած բարեգործությունների շնորհիվ լրացներու համար ավելորդ չենք համարում ավելացնել և այն, որ նա Կարինում բաց է արել նաև մի գուշտ «Արհեստանոց դպրոց», որի վարպետությունը չենք իրեն պատրաստել էր տվել Ռուսաստանում. դրանք Թիֆլիսի պետական Արհեստավորաց դպրոցի շրջանավարտներ էին, որոնց համար Սանասարյանը հնարավորություններ էր ստեղծել նախապես իրենց արհեստների մեջ կատարելագործվելու Պետերբուրգի Նիկոլայ Յեսարևիչի անվան Արհեստավորաց դպրոցում:

Գ

Այստեղ ավարտելով մեր համառոտ առելիքը Կարապետ Նվյանի և Մկրտիչ Սանասարյանի մասին, անհրաժեշտ ենք համարում համառոտաբար տալ նաև Նրևանի քաղաքային բժիշկ ու Սանասարյանի քրոջ որդի Լեոն Տիգրանյանի գործունեության պատմությունը:

Տիգրանյանը իր «Իմ հիշատակարանը»-ում հետևյալ համառոտ տեղեկություններն է հաղորդում իրենց տոհմի «ծագման» մասին. «Իմ պապս, Տեր-Հովհաննիսյանը, որ ջուղայեցի էր և Զուլայումն էր բնակվում, քահանա էր ձեռնադրվել սրբախից տիրապետության ժամանակ, այն է 1797 թվին. դրանից անուներ եղել է Գյուլիստան. Հայրս, Ակոբջան աղեն, ծնվել է Զուլա 1805 թ. հոկտեմբերի 10-ին, պալական տիրապետության ժամանակ. հայրս եղել է պատերազմում պարսկացի դեմ 1827 թ., երբ ռուսներն եկել են Նրևանի նահանգն առնելու, և եղել է պատերազմում տաճկացի դեմ 1829 թ., երբ ռուսներն առնում են Գյումրին (Գումայր) հետագայում վերանվանված «Ալեքսանդրոպոլ»։ Պարապել է վաճառականության, մտել է ծառայության 1836 թ.։ Պատկվել է մորս հետ 1830 թվին և մեռավ տիֆից 1852 թ. (այդ նրա երկրորդ ամուսնությունն է եղել). մայրս՝ Կատարինեն վախճանվեց ծերությունից 1891 թ. հունվարի 18-ին, նա ծնվել էր 1815 թ. Թիֆլիզում։ Ուրեմն հայրս մեռավ 47 տարեկան, իսկ

մայրս մեռավ 76 տարեկան հասակում:

Մի այլ տեղում էլ նա իրենց ազգանվան, ընտանիքի տարբեր ազգանուններով երկու ճյուղի բաժանվելու մասին ուրիշ լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում. նա ասում է, որ իրենց պապի հոր անունը եղել է Տիգրան, որի անունով էլ կոչվել է ընտանիքը, և որ ինքն ունեցել է նաև մի կրտսեր հորեղբայր՝ Հարություն անունով: Հայրը՝ յուր փոքր եղբորը՝ Հարությունին տարել է Մոսկվա՝ կազարյան ճեմարանում տեղավորելու համար, բայց մերժում է ստացել. պատճառաբանել է, որ ինքն էլ կազարյանների պես ջուղայեցի է ու դրա համար էլ պետք է անպայման ընդունեն. երբ այդ էլ չի օգնել, երեխային թողել է այնտեղ ու ինքը վերադարձել: Ճեմարանի վարչությունը ճարտահատյալ ստիպված է եղել ընդունել, բայց երբ ազգանունն իմանալու համար հարց ու փորձ են արել երեխային, սա չի իմացել իր ազգանունը ու սսել է, որ Տեղ Հովհաննեսի որդին է. այսպիսով նրա ազգանունը ճեմարանի ցուցակներում նշանակվել է «Հովհաննեսյան» ու հետագայում էլ շարունակել է կոչվել այդ ազգանունով: Դա Թիֆլիսի լավ հայտնի բժ. Արտեմ Իվանիչ Հովհաննեսյանն էր, «Փորձ»-ի և «Արձագանք»-ի խմբագիր Աբգար Հովհաննեսյանի ու Նրեանի Գալիանյանի դպրոցի տեաչուհի՝ օրիորդ Գալիանի հայրը:

1875 թվին Լեոն Տիգրանյանը Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետի լիակատար դասընթացն ավարտելուց հետո վերադառնում է Պետերբուրգ՝ քեռու մոտ և ցանկանալով կատարելագործվել վնասների հիվանդությունների վերաբերյալ օպերացիաներ կատարելու գործում, խնդրում է քեռուց՝ Պետերբուրգի ծննդաբաններից մեկում իր համար պաշտոն գտնել, պատրաստակամություն հայտնելով աշխատելու նույնիսկ առանց ուժեղի: Բայց քեռին ցանկանալով, որ նա արդեն ծառայության մեջ գտնվի ու ուժեղ էլ ստանա, միջնորդում է մայրաքաղաքի ոստիկանապետ Տրեպոլի առաջ և Տիգրանյանը նշանակվում է որպես «сверхштатный медицинский чиновник Петербургской городской полиции». Այս պաշտոնը տանելի էր նրա համար, այդ պատճառով էլ նա անմիջապես հրաժարվում է դրանից: Վեց ամիս իր թաղած որոնելուց հետո, վերջապես նրան հաջողվում է տեղավորվել «Надежденская» կոչված ծննդաբանում, որտեղ և նա ձեռք է բերում անհրաժեշտ փորձառություն: Այդտեղից էլ նա հետո փոխադրվում է Больница Преображенского полка:

1877 թվականի վերջերին, ուսումնական պատերազմի օրերին, ասիական ճակա-

տի զորամասերում բժավոր տիֆի մեծ համաճարակ էր սկսվել: Բժիշկների պակասությունը չափազանց զգալի էր. հիվանդանոցում հայտարարվում է թե օրգենատորներից ցանկացողները կարող են ռազմաճակատ մեկնել հիվանդանոցում իրենց ունեցած տեղը պահպանելով:

Տիգրանյանը նկատելով, որ Նվյանի վարժույթն իր հեկատամբ նախկին անհաշտ եղանակով շարունակվում է և քեռու կողմից էլ վիրավորական խրատները, հանդիմանություններն ու նստացիաները չեն պակսում, առանց հաշիվի առնելու, որ նա այլևս նախկին աշակերտն ու ուսանողը չէ, այլ հասուն մարդ, և գուշակելով, որ այդ բոլորը կարող է վերջանալ անախորժությունը ու քեռու հետ հարաբերությունները խալալ խզելով, մյուս փողմից էլ ցանկանալով տեանել Թուրքահայաստանը, նա մի խիստ նամակ է գրում Նվյանին և առանց քեռուց թույլտվություն ստանալու, հիվանդանոցում արված հայտարարության համաձայն, զինվորական բժշկի պաշտոն ստանձնելով 1877 թվի դեկտեմբերին Թիֆլիսի վրայով մեկնում է ուրիշ ռազմաճակատ՝ Հասան-Ղալա, որ հասնում է 1878 թվի հունվարի վերջին, երբ զինադադար էր հռչակարարված: Հասան-Ղալայում նա երկու շաբաթ սպասում է հրամանի, նշանակված տեղը՝ 79-րդ լազարեթը մեկնելու համար, որը գտնվում էր Էրզրումի գյուղերից մեկում: Հասան-Ղալան այդ ժամանակները մի սակավաքանակ խուլճուկ ավան էր՝ ավերված հին բերրով և զինվորականների բնակության համար հարմարություններից չուրվ. ընայած դրան այնտեղ էր կենտրոնացած ողջ սպայակույտը՝ կորպուսի հրամանատար Լոռիսի գլխավորությամբ: Տիգրանյանը քնում էր մի սարայում, առանց հաշիվելու, գետնի վրա տակը մի մուշտակ փռելով և մի մուշտակ էլ վրան առնելով: Հաց չկար. նա կերակրվում էր չամչով, սիսեռով ու որդնոտ պաքսիմատով: Բարեբախտաբար մի բարեխիտ ուսուկին ամեն օր նրան մի բաժակ սուրճ էր տալիս, բաժակը մի ուսելով: Մոլեգնում էր բժավոր տիֆը. նա ներկա գտնվեց բժավոր տիֆից մահացած 30 հազար զինվորի թաղմանը. փորվել էին սենյակի մեծությամբ ահագին փուներ—եղբայրական գերեզմաններ ու նրանց մեջ դարսվել հազարավոր դիակներ: Այդտեղ, այդ դաժան հիվանդությունից, մահացավ նաև հայ գեներալ Բեհրուս Մարտիրոսի Շելկոնիկյանը (1878 թ. փետրվար 10):

Տիգրանյանն տյերան էր կարտեղ հացի, որ մի օր էլ գլուխից դուրս, գրտանքի ժամանակ նկատելով մի երիտասարդի ու օ-

բիրոգրի, որոնք հայերեն էին խոսում, հետևեց նրանց մինչև տան դուռը ու ապա դուռը բախելով հաց խնդրեց: Մերժում ստանալով նա սկսեց նախատել նրանց, որ տեղացի լինելով և անշուշտ հաց ունենալով, չեն ուզում մի կտոր հաց տալ մի հայ բժր-կի, որը երկու շաբաթ է հացի համ չի տե-սել: Այդ ժամանակ դուռը բացվում է և նրան 5—6 լոշ են տալիս, հրաժարվելով դրամ ընդունելուց: Նույն գույգին Տիգրան-յանը հետագայում հանդիարում է էրզրու-մում և մոտ ծանոթություն հաստատում հետները: Երիտասարդը Հարություն Բա-տուրմաշյանն էր, փակ օրիորդը՝ նրա քույր Սոֆիան, Կարնո առա-ջավոր ու ունևոր ըն-տանիքի զավակներ: Օրիորդը շատ գեղե-ցիկ ու բարեկերթ աղ-ջիկ էր, բայց կաղ էր: Գենեթալ կազմեր Տիգ-րանյանին խորհուրդ էր տալիս ամուսնա-նալ նրա հետ:

Մի օր էլ գյուղի շրջակայքում զբոսնե-լիս Տիգրանյանը հան-դիպում ու ծանոթա-նում է կոսիսի հետ, որը մի գենեթալի հետ նույնպես զբոսանքի էր դուրս եկել: Տիգրանյանը կանգ-նելով զինվորա-կան պատիվ է տալիս նրան. լոռիսը մոտե-նում, ձեռք է մեկնում նրան և ապա հարց ու փորձ անում նրա ով լինելու մասին. երբ իմանում է, որ նա երեանցի Տիգրանյանն է, իր վաղեմի բնկեր ու բարեկամ Սանա-

սայանի քրոջ որդին, ուրախանում է և հե-տաքրքրվում նրա առողջությամբ:

1878 թվին էրզրումը հանձնվում է ռուս-ներին: Տիգրանյանը մի լեհ ու մի հույն բժիշկների հետ ուղարկվում է ալեստեղ՝ քա-ղաքն ու զորանոցները ախտահանելու հա-մար: Նրանք մեկնում են սահակով. սակայն զորեղ սահաւ-սնիքի ու խոր ձյան հետևան-քով երեսուն վերստ տարածությունը նրանք մի օրում կտրել, անցնել չեն կարողանում և ստիպված են չինում վեա փիշերին իջեա-նել քաղաքի Ալեգիե ֆարսում, որ հենց այդ

օրն էր քաղաքի հետ միասին հանձնվել ռուսներին. այդտեղից նրանք կարողանում են վաղ առավոտյան քաղաք հասնել, քաղա-քի դարպասների առաջ դեռ թուրք պահակ-ներ կանգնած տեսնելով: Տիգրանյանը սպա-սում էր տեսնել մի ճոխ արևելյան քաղաք, բայց դրա փոխարեն տեսնում է մի սովորա-կան ասիական քաղաք, տափարակ տանիք-ներով, նեղ, ծուռ ու մուռ փողոցներով, շա-փազանց աղտոտ, բծավոր տիֆից մեծ թվով տառապող ու մեռնող զինվորներով լիքը:

Քաղաքի ժամանակավոր նահանգապետ էր կարգված հայ գենեթալ Աղեքսանդր Քիշմիշ-յանը, որին Տիգրանյանը Պետերբուրգում


հաճախ էր տեսել եղ-յանի տանը, երբ նա դեռ ենթասպայի առ-տիճանով ուսանում էր գենեթալական շտա-բում: Տիգրանյանը ներկայանում է թե՛ նահանգապետին և թե՛ նրա օգնական Կոս-տանդին Կամսարա-կանին, որը նոր էր ամուսնացել Տիգրան-յանի հորեղբոր՝ բժ. Արտեմ Իվանիչ Խոան-նիսյանի դստեր՝ Ան-նայի հետ և որին նա դեռ անծանոթ էր: Մանոթանալուց հետո նրանք ախպես են մի-մյանց հավանում, որ շուտով սկսում են միասին ապրել: (Կամ-սարականը պատե-րազմից հետո նշա-նակվում է վանի հյու-պատոս):

Քաղաքն արդեն լրջ-վել էր ռուս զորքով. սպայակույտը Հասան-Ղալայից նույնպես

Լ. Տիգրանյան

տեղափոխվել էր Կարին: Տիգրանյանի հրա-կողմության ու բժշկական հոգաբարձության էր հանձնված 150-200 տիֆով հիվանդ զին-վոր, որոնք տեղավորված էին ինն իրար մոտ գտնվող բնակարաններում:

Մի օր նա այցելում է քաղաքի գլխավոր ու ամենամեծ հիվանդանոցը, որը տեղա-վորված էր թրքական մի ընդարձակ գոթա-նոցում. հիվանդներն այդտեղ պառկած էին գետնին, իրենց վերարկուների մեջ փաթաթ-ված. միլիոնավոր ուղիներ էին վիատում նրանց վրա. մի ռուս զինվոր՝ Իվան անունով, օր Ղրիմի թի սղեկյան պատերազմի ժա-



մանակվանից մնացել էր էրզրումում ու ամուսնացել հայ աղջկա հետ, այդտեղ բուժակի պաշտոն էր կատարում: Բժիշկ չկար. եղածները կամ վարակվել ու մեռել էին, կամ ապաքինվելով հրաժարվել բժշկությունից: Այդ մեծ հիվանդանոցում կային միայն երկու բժիշկ, այն ինչ Տիգրանյանի ասելով 12 բժիշկ էլ որ լինելու դարձյալ քիչ էր:

Տիգրանյանը, բացի իր հսկողության տակ դանված 150-200 հիվանդից, կարողացել է օրական 100 հոգու բուժօգնություն ցույց տալ, միաժամանակ վարելով նահանգական բժշկի, քաղաքային բժշկի, առողջապահական ջրկատի պետի օգնականի և զորքի համար քարվանսարանների պատրաստողի պաշտոնները: Եվ այս բոլորից հետո նա դեռ ժամանակ է գտել «Մեդուս»-ի համար մի քանի հոգիների գրելու, որ նա կպցրել է իր «Բնաբանական հոգիածները» խորագիրը կրող տետրում: Այս բոլոր կատարելով նա հետ չի մնացել և ընկերական քեֆերից. նա չի վախեցել նաև հիվանդանալուց, սակայն կանոնավոր կյանք է վարել ու որ գլխավորն է, ոգելից խմիչքներ չի գործածել:

Գարնանը Կարին է գալիս Պետերբուրգից «Надежденская» մանդարնի յնկեր բժիշկներից մեկը՝ Րեյտենբերգը, որը կարգվում է առողջապահական ջրկատի պետ: Նա ընկերանալով Տիգրանյանի ու Կամսարականի հետ սկսում է նրանց հետ միասին ապրել. այս մասին Տիգրանյանը գրում է իր «Բնաբանական հոգիածներ»-ում. «Ես էի մեր տան տղաներից. ամսական ամեն մեկս դնում էինք 100-ական ռուբլի և 300 մանեթով ես կառավարում էի մեր տունը: Ամեն բան թանկ էր: Կամսարականի հրավիրած հյուրերին վերջ չկար: Ես զարթնում ու հագնվում էի հյուրերի առաջ, և պատկում, քնում հյուրերի առաջ, մի խոսքով մեր տունը հյուրանոց էր դարձրել Կամսարականը»:

Էրզրումում բժիշկ չկար, որ հիվանդացած չլինեի: Կամսարականը խնդրում է Տիգրանյանին իր խնամքի տակ վերցնել ու բուժել առաջին սակրավոր վաշտի հրամանատար վրաց իշխան Թումանյանին: Տիգրանյանը համաձայնվում ու բուժում է հիվանդին: Վերջինս ապաքինվելուց հետո խնդրում է գնեցրալ Հեյմանին վաշտի մահացած բժշկի փոխարեն Տիգրանյանին նշանակել: Հեյմանը կատարում է իշխանի խնդիրը և Տիգրանյանի պաշտոնների վրա ավելանում է նաև առաջին սակրավոր վաշտի բժշկի պաշտոնը: Իրա հետևանքով Տիգրանյանի վարկը սպայության շրջանում բարձրանում է և ամենքն էլ սկսում են նրա մոտ բուժվել: Լոռիսն էլ լսելով նրա

մասին, իբրև հմուտ բժշկի, մի երեկո թիկնապահ ուղարկում ու իր մոտ է կանչում: Նա, սիրալիկ ընդունելություն ցույց տալուց հետո, խնդրում է նրան ամսիջապես ճանապարհվել հնուս և բուժել իր եղբոր ողորմելի դրագունների գնեցրալ փոքր Լոռիսին, որ հիվանդ էր տիֆով, իսկ տեղի բժիշկը նորավարտ լինելով անվստահի էր: Նա ուսական մատուցության մեջ գտնվող երկու չեքքեզ թիկնապահների ուղեկցությամբ ճանապարհվում է հնուս, որը զրանվում էր էրզրումից դեպի հարավ երեք օրվա ճանապարհ հեռավորության վրա: 1878 թվի մարտ ամսին էր: Նրանք գնում էին Արաքսի ավերով, լեռների գագաթներից ու անդուղների ձգբերից անցնելով: Սաստիկ ցուրտ ու քամի էր, ճանապարհներն էլ ծածկված խորը ձյունով: Վերջապես նրանք հասնում են հնուս, բայց արդեն ուշ էր. հիվանդը մի քանի ժամից հետո մահանում է: Նրանք նորից վերադառնում են էրզրում իրենց հետ թերեղով գնեցրալի դիակը:

Ձինդադարից հետո սկսվում են խաղաղության դաշն կոչելու բանակցություններ: Լուր է տարածվում, որ էրզրումի հայ գյուղերը պատրաստվում են Ռուսաստան գաղթելու:

Նրանք վախենում էին, որ երկիրը վերստին կհանձնվի թուրքերին, ուսական զորքերը կքաշվեն և հայ ժողովուրդը, իբրև առանձնիկ կողմնակից, դարձյալ վնասվարկի թուրքերի վրեժխնդրության, ինչպես սովորաբար եղել է թուրքական պատերազմներից հետո:

Երբ այդ ընթացքում հաստատվում է, Տիգրանյանը, Բաստումաշյանը և Թուրանթաճիզ սպա՝ ուսիացի Գրիգոր Նիկողոսյանը խորհրդակցելով որոշում են բոլոր միջոցները գործադրել գաղթականությանը կասեցնելու համար և նրանց այդ հաջողվում է:

Այս մասին լուրը հասնում է Լոռիսին, որը տուգեղու համար իր մոտ է կանչում Տիգրանյանին: Իր «Բնաբանական»-ում Տիգրանյանն այդ մասին գրում է. «Մի օր Լոռիսը կանչեց ինձ, սիրով ընդունեց և հարցրեց իմ կարծիքը հայերին գաղթեցնելու մասին: Ես հարցրի. «Ինչպե՞ս ես խոսեմ Ձեզ հետ, որպես ուսական գնեցրալի, թե՞ ինչպես հայի հետ»: Նա ասեց. «Իհարկե ինչպես հայի հետ»: Ես ասեցի, որ ամեն մի գաղթականություն քանդում է ժողովուրդը և այլն»:

Հաշտություն է կնքվում թուրքերի հետ և Տիգրանյանը առաջին սակրավոր վաշտի հետ 1878 թվի օգոստոսի 1-ին ճանապարհվում է դեպի Թիֆլիս, որ վաշտի մշտական

ընակության վայրն էր: Տեղ են հասնում հոկտեմբերի 15-ին:

Տիգրանյանն իր ընկերներով, ինչպես տեսանք, կասեցրին էրզրումի գաղթը, բայց Ղարա հասնելով հանդիպեցին բասենցոյ գաղթին: Նա և Նիկողոսյանը այստեղ էլ փորձ արեցին կասեցնելու սկսված գաղթը, բայց նրանց ջանքերն ապարդյուն անցան: Հետո իմացվում է, որ էրզրումի փաշան հայ ժողովրդին իր հովանավորության տակ առնելով սատարել է թուրքերին ու այսպիսով էրզրումի հայերը գերծ են մնացել հալածանքից:

1879 թվի հունիսին Տիգրանյանը գինվորական բժշկի պաշտոնը թողնելով վերադառնում է Երևան:

Այստեղ նա սկսում է իր եռանդուն հասարակական գործունեությունը: Նա իր տանը մանկական մատենադարան է հիմնում ու հրավիրում Թեմական ու Գալիանյան դպրոցների աշակերտությանը գրքեր վերցնել կարդալու համար. մինչև անգամ փողոցից էլ «տղերը» է հրավիրում իր մատենադարանից ձրիաբար օգտվելու համար: Մատենադարանը, որի վրա նա ծախսել էր 600 ուռլի, գոյություն է ունենում երկու տարի ու կարդացվում է 3000-ի չափ գրքեր: Այդ մասին Տիգրանյանը իր «Իմ հիշատակարանը»-ում գրում է. «Թափախել Պատկանյանը երբ էնձ մոտ էր, ծանոթացավ գործիս հետ և հետո էլ «Փորձ»-ում (կարծեմ) գրեց, որ իմ գրադարանիս օգուտը հավասար է մի լավ ուսումնարանի տված օգուտին»:

1881 թ. նա սկսում է հրատարակել յուր «Առողջապահական թերթը»-ը, որի գոյությունը տևում է երեք տարի: Հրատարակում է բժշկական բառարան, գրում է անատոմիայի դասագիրք հայկական դպրոցների համար, հրատարակում է բժշկական բույսերի բառարան, հոդվածներ է դետեղում «Մշակ»-ում և Երևանի «Պատկ»-ում:

«Մենք այնպես տաքանք մեր հասարակական գործերը, — գրում է նա իր «Իմ հիշատակարանը»-ում ընկերների ու իր այդ ժամանակվա գործունեության մասին Երևանում, — որ Թիֆլիզի ինտելիգենցիան մեծ մասամբ հարցերի մասին խոսում և ասում էր. «Եսկ երևանցիք ի՞նչպես են կարծում»:

1881 թվին նա կառավարության հրամանով գործուղվում է Պարսկաստանի Մոզլու-Րուպաղ գավառը՝ այնտեղ հայտնված ժանտախտ վարակիչ հիվանդությունը ուսումնասիրելու համար: Այստեղ իր գործը շուտ վերջացնելով նա ինքնագլուխ կերպով մեկնում է Սալմաստի վրայում և Ուրմիո ծո-

վակի հյուսիսային ափերով վան, ուր հյուստոտուն էր կամսարականը: Այս տեղերում թյան տալավորությունները նա տալարել է «Մշակ»-ում:

Նա Երևանի Գալիանյան դպրոցում ավանդել է մարդակազմություն, իսկ Թեմական դպրոցում՝ մարմնամարզություն:

1883 թվին սկսվում է Երևանի հայտնի քաղաքական գործը, երբ մի խումբ գործիչներ, որոնց թվում և Տիգրանյանը մեղադրվում էին հետո ապագայում Հայաստանը վերականգնելու հանցանքի մեջ. ցարական կառավարության կողմից այսպիսի գործերը սովորական էին և ստեղծվում էին հայերին հալածելու համար: Գործի քննությունը երկարում է...

1884 թվին Տիգրանյանը ամուսնանում է, իսկ հաջորդ 1885 թ. հունվարի 15-ին ստացվում է գործի վճիռը և նույն ամսի (18-ին էլ կարդացվում մեղադրյալներին ցարի կողմից հաստատված վճիռը, ըստ որի մեղադրյալները դատապարտվում են ազատ քսորի զանազան վայրեր, ըստ իրենց ընտրության: Տիգրանյանն ընտրում է Դուրպատը և կնոջ հետ մեկնում այնտեղ. այդտեղից էլ հետագայում իրավունք ստանալով մեկնում է արտասահման: Աքսորի ժամկետը լրանալուց հետո նորից վերադառնում է Երևան:

1894 թ. մարտին, վասիլ Գեղամյանից հետո, նա Երևանի քաղաքագլուխ է ընտրվում, բայց չկարողանալով տանել ժամանակի նահանգապետ հայտույց Յրիգին ու փոխնահանգապետ Նալաշիձեի վերափոխական վերաբերմունքն ու խնդրանքները, 8 ամիս աշխատելուց հետո, 1895 թ. ապրիլին հրաժարվում է պաշտոնից:

Տիգրանյանի թողած գրական ժառանգությունը մեծ չէ. մենք նրա գործերի անուններն արդեն հիշել ենք իրենց տեղերում. դրանք մեծ մասամբ վերաբերում են բժշկականության: Նրա վերջին աշխատանքը հանդիսանում է իր կողմից թարգմանված բժշկարանը, որ նա լույս է բնծալել 1894 թվին: Ամենակարևորը նրա գրվածքների մեջ, ոչ ի հարկե գրական արժանիքների տեսակետից, այլ յուր բովանդակության տեսակետից, «Իմ հիշատակարանը» է: Այդ հիշատակարանը կազմված մի ձեռագիր մեծ գիրք է, որն ունի հետևյալ խորագիրը՝ «Իմ հիշատակարանը (բժ. և. Տիգրանյան)», իմ երեխաների համար». գիրքը բաղկացած է 187 էջից, շարադրված Երևանի հասարակ խոսակցական լեզվով:

Վ Ե Ր Զ Ա Ր Ա Ն

Տիգրանյանը թեև ժամանակակիցների ասելով մի «գծառուտ ու վիսպիստ» բնավորության տեր և հախուռն գործիչ է եղել, բայց միաժամանակ ճշմարտախոս, ազնիվ ու մարտի մարդ է հանդիսացել, ուստի կարելի է ու պետք է հավատ ընծայել նրա գրածներին, եթե միայն «Էմ հիշատակարանը»-ն որոշ էջերում նվազաթիվ շափազանցությունները և կասկածելի կոտորները հաշվի առնվեն:

Այդպիսի շափազանցություններից ու կասկածելի կոտորներից մեկն էլ, մեզ թվում է, հանդիսանում է Եզյանի «դանուխ» պատմությունը Նալբանդյանի նկատմամբ: Դա մեզ համար առանձին կարևորություն կունենան, եթե լրջորեն առուգված ու հիմնավորված լինեի նաև ուրիշ աղբյուրների հիման վրա:

Մենք դժվարանում ենք հավատալ, որ Եզյանի նման ազգասեր և մեծ անուն ու հռչակ վաղեմող մարդը, թեկուզ և ծանր ու դժվարամարտ բնավորության տեր լինելով հանդերձ, կարող էր մատնիչ հանդիսանալ ազգի անխաբոյախ բարեկամ և փրկիսկ ուրաակից մտերիմ Նալբանդյանին: Մենք նմանապես դժվարանում ենք հավատալ, որ ցարական ճեղքորդ բաժնի» աստիճանավորները, եթե անգամ նրանք ազատամիտ էլ եղած լինեին, վստահանալին Պետրպալուժուկ թերթի Ալեքսեևի թավելինում տարիներով նստած ու հետո էլ աքսորի դատապարտված պետական մի ծանր հանցավորի հայրանել նրա ամենածածուկ և սպառնացիչ դարձանքները: Իսկ ո՞րտեղից և ի՞նչ աղբյուրից կարող էին քաղած լինել «ճեղքորդ բաժնի» «ազատամիտ» մարդիկ Նալբանդյանի այդ ապշեցուցիչ, ամենածածուկ դադանքները, քանի որ ոչ ոքի ոչինչ չէր ապել: Հասկանալի պիտի լինի, որ միայն ու միայն Նալբանդյանի մեղադրական գործից, որն այժմ մեզ հայտնի է և որի մեջ սակայն չի փառվում ոչ մի վավերաթուղթ, մինչև իսկ որևէ հետք, այսպես թե այնպես վաղված Եզյանի անվան հետ: Իսկ ինչ վերաբերում է նրան, որ Նալբանդյանը և Եզյանը սրտակից ու մտերիմ բարեկամներ են եղել միմյանց հետ, դրան կարելի է հավաստիանալ «Նալբանդյանի դիվանում» տպագրված, նրա բանալից իր եղբորը գրած նամակներից*):

Ուրեմն ինչո՞ւմն է բանը. Տիգրանյանը որքան էլ ատելիս լինեի Եզյանին, անկաս-

կած չէր կարող ինքը հեղինակած կամ ինչպես ասում են մոգոնած լինելու եկեղեցու բակում Եզյանի ու Նալբանդյանի միջև տեղի ունեցած դեպքի և ջերմ Նալբանդյանական Բուքարյանի ու Նալբանդյանի խոսակցության մանրամասնությունները: Մենք ենթադրում ենք, որ տեղի է ունեցել մի թյուրիմացություն, և այդ թյուրիմացությունը պետք է որոնել «դանուխ» խոսքի մեջ: Մենք գիտենք, որ «դանուխը» Նալբանդյանի մասին եղել են ու դրանցից մեկն էլ Ալվազյան Գաբրիել վարդապետի գրածն է եղել, որ այժմ հայտնաբերվել է: Կարծում ենք, որ հենց այդ «դանուխը» կարող էր ուղարկված լինել Եզյանին, իբրև հայկական գործերին քաջածանոթ Նեղթին Գործոց Նախարարությունում ծառայող վստահելի աստիճանավորի, որպեսզի նա իր կարծիքը հայտնեի ու հավանական է, որ նա ստիպված գրած լինի այդպիսին: Կարելի է ենթադրել, որ հենց այդ «կարծիքն» է եղել, որ նենգությամբ «դանուխ» փոխարկված հայտնված է եղել Նալբանդյանին, մի հանգամանք, որ պատմության այլ գունավորում է հաղորդում: Այդպիսի մի կարծիքի սևագրության օրինակը փառվել է Եզյանի թղթերի մեջ, որ նա գրած է եղել ի պատասխան Նեղթին Գործոց Նախարար Վալուեի կողմից իրեն ուղարկված բանաստեղծ Ս. Շահադիյանի «Անոնի վշտի» առթիվ տրված անստորագիր «դանուխ»: Համենայն դեպս մենք կարծում ենք, որ այդ բոլորի մեջ մի թյուրիմացություն պետք է տեղի ունեցած լինի:

Տիգրանյանն իր «Էմ հիշատակարանը»-ում Սանատարյանին ամեն դեպքում ներկայացնելով որպես Եզյանին հլու հնազանդ, նրա հմայքով տարված ու գերված մարդու, իր հետ նրա սառն վարվելու, միշտ խրատական ձևով խոսելու, մինչև իսկ օտարների առաջ հանդիմանելու հանգամանքն էլ վերագրել է Եզյանի աղբյուրներին, նրա դժբաղդուն: Մեզ թվում է, որ նա կամ սխալվում է, կամ Եզյանի հանդեպ ունեցած կույր ատելությունից է այդպես վարվում: Նա չի հասկացել, կամ չի ուզեցել հասկանալ, որ քեռու այդ վարմունքը հետևանք է եղել ինչպես երևում է, նրա մեջ հնուց արմատավորված դատարարականության: Նա պիտի կարդացած լինեի, և անշուշտ կարդացել է իր քեռու Փարիզից գրած վերջին նամակը, որի մեջ նա շնորհավորելով Տիգրանյանին, քո-

*) Տես Դիվան Միլայեի, Նալբանդյանի, էջ 287:

չը՝ Կատարիներին և Հարս Նուսեիրն, անդրա-
նիկ զավակի ծննդյան առթիվ, խրատել է
Հաբսին. «Նինույա ջան,—գրել է նա,— բնա-
կան օրենք է, որ ծնողները կսիրեն իրենց տի-
ղոցը, խորհուրդ կտամ քեզ, որ դու քո զավա-

կիդ սիրես գլխով, փակ սրտով սիրելիդ աշխարհ
ծածկես, որ որդիդ շիմանա»: Այս հիմունքով
էլ բնական է կարծել, որ նա ծածկել է իր
սեբը քրոջ որդու՝ Լևոնի նկատմամբ, որի
համար ոչինչ չի խնայել:

Այս հոդվածը գրելուց հետո եմ Հետևյալ աղբյուրներից.

1. Լ. Տիգրանյանի «Իմ հիշատակարանը» խորագրով ձեռագիրը:
2. М. С. Санасаров (некролог) «Новое обозрение», 1890 г. № 22:
3. Կենսագրական տեղեկություններ, «Նոր դար», 1890 թ. № 57:
4. Նամակ առ խմբագրություն, Գրիգոր Նիկողոսյանի հոդվածը «Արևելք» թ. 263, 1890 թ. սեպտ. 25:
5. Наследство Санасарова и действия его душеприказчиков հոդվածը «Тифлисский листок», 1890 թ. № 207:
6. Նամակ խմբագրին, Լ. Տիգրանյանի հոդվածը. «Մշակ», 1890 թ. նոյեմբ. 8 № 102:

